El Consejo Regional Sudamericano de la Organización Demócrata Liberal Armenia, expresa por este medio a la señora esposa, hijos y demás familiares del Sr. Aram Donikian, su acompañamiento en el dolor que los aflige ante su desaparición.

.....

El Club Baikar de Buenos Aires lamenta profundamente la desaparición de su socio fundador, Sr. Aram Donikian, y así lo expresa a su señora esposa, a sus hijos y demás familiares.

## Donaciones en memoria del Sr. Aram Donikian

| | |
|---|---|
| Mihran Sarafian y Sra. | A 30.000.- |
| Daniel Youssefian y Sra. | A 30.000.- |
| Dicranuhí Horigian e Hijos | A 10.000.- |
| Nshan Deondiyan y Sra. | A 6.000.- |
| Kevork Kechichian y Sra. | A 5.000.- |
| Vanig Husian y Sra. | A 3.000.- |

# En pro de la Justicia

### *(Fragmento)*

**Por Tavit Kasparian (KARUN)**

El problema nacional es hoy una cuestión dominante que adquiere trascendencia internacional y que se agudiza gradualmente. Ese problema, tal como se exteriorizó en su verdadera esencia en las condiciones de la reconstrucción, no halló su solución definitiva incluso en un país multinacional como la URSS. Ahora ya no es un secreto que, con relación a los problemas nacionales no resueltos, tuvieron lugar serias conmociones en Kazajstán, en Estonia, que se levantaron los tártaros de Crimea y que los acontecimientos que se desarrollaron en Transcaucasia, ya se encuentran en el centro de la atención mundial, lo cual da cuenta de la extraordinaria agudización del problema, como así también de su importancia en el terreno de las relaciones nacionales.




A la par de la legítima voz de la verdad vociferó también la impostura, desnaturalizando el planteo justo del problema con numerosas manifestaciones falaces. Pero el pueblo que se levantó en pro de la justicia y de la reconstrucción no perdió su esperanza.

Vivió días plenos de esperanzas y expectativas, de angustia e ira, pero también de zozobra y de sangrienta dramaticidad...

Nuevamente los problemas no resueltos se tornaron en objeto de palabras y discusiones, y nuevamente nos presentamos ante el mundo con nuestros viejos dolores y nuestras nuevas esperanzas.

No revolveré la historia, pero en estos días en los que se desnudan y condenan, entre otras, las injusticias stalinistas, no puedo dejar de decir que muchos problemas que aún permanecen en el orden del día y pendientes son hoy producto de la actividad perversa y delictiva de ese máximo criminal del siglo XX. Fue a consecuencia de las instigaciones de Stalin y de sus intrigas diplomáticas con Turquía por lo que volvió a ser víctima un pueblo, cuyos derechos políticos escupió cuando éste perdió su soberanía y su fuerza.

Esa sin precedente agresión stalinina hacia un pueblo que ya en 1910 sufrió graves peripecias prosiguió durante todo su gobierno. Así, desmembró la totalidad del territorio de la soviet-izada Armenia Oriental. Así, en el infausto 1937, le asestó el golpe más duro al pueblo armenio. Después de la guerra no volvieron la mitad de los hijos del pueblo armenio. Y Kerch se convirtió en un nuevo fraternal cementerio armenio. En 1949 Stalin comenzó una nueva serie de persecusiones contra el pueblo armenio.

En 1945 Stalin organizó la repatriación de los ciudadanos soviéticos que durante los años de la gran guerra patria se vieron forzados a abandonar la URSS. Regresaron cinco millones de personas, pero al cabo de un corto tiempo a muchos de ellos le señalaron el camino de los campos de concentración siberiano. Con el mismo propósito, en 1946 autorizó la repatriación de los armenios que durante 1915/1920 fueron expulsados violentamente de su patria histórica por los turcos. Más de un cuarto de millón de armenios se pusieron en camino a la Patria. Pero, al cabo de uno o dos años, muchos de ellos también fueron desterrados a Siberia por Stalin.

Todo esto testimonia la consecuente política de Stalin de exterminar al pueblo armenio. Todo esto no debe ser olvidado jamás. Por el contrario, deben publicarse los datos probatorios y volver a recordarle a los gobernantes de nuestra república y también de nuestro país, que se llevó a cabo una clamorosa injusticia histórica. De ahí que, inspirado por los ideales de la reconstrucción, el pueblo armenio se ha levantado por tener presente ese pasado. Un pueblo que siempre ha sido partidario del progresismo, desde la adopción del cristianismo hasta su in-

(Cont. en Pág. 12)

# Orígenes del Cristianismo en Armenia

***Daniel Antoyan, está radicado en Córdoba donde estudia Licenciatura en Historia, teniendo el propósito de hacer el doctorado en Historia Armenia. El siguiente es el resultado de un trabajo de investigación para el cual consultó 54 fuentes, entre enciclopedias, evangelios, libros y otras publicaciones.***



En el año 302 de nuestra era, el cristianismo fue declarado como religión de Estado en Armenia por Tirídates III (según el historiador Pierre Grousset ello ocurrió en el 288), dándose conversiones masivas con la predicación del Evangelio por parte de San Gregorio, que se materializaron con el bautismo de más de 100.000 personas en una primera etapa, y con el resto de la nación más adelante.

La cantidad de cristianos en Armenia era tal, que Maximiliano Daza (305-13) levantó una persecución contra los cristianos armenios.

Estas conversiones masivas y esta persecución serían incomprensibles si la Iglesia Armenia hubiese surgido recién en el siglo IV de nuestra era; pero cuando San Gregorio comenzó a predicar a Cristo, no sólo había cristianos sino también una iglesia establecida en nuestro territorio.

Según nuestra tradición, Armenia habría sido evangelizada por San Bartolomé, cuya tumba estaría en Ajpag (Albanápolis) donde habría sido martirizado en el año 68, y por San Judas Tadeo (que sólo se da en nuestras tradiciones y con variantes). San Judas Tadeo es ubicado en Armenia entre los años 35 y 43, en el reinado del Rey Sanadrug (Abgar según Moisés de Corena). No se sabe si es uno de los 12 apóstoles. Uno del grupo de los 70 (Lucas 10:1), o el pariente de Jesús que escribió una Epístola (Marcos 6:3, Judas 1).

La tradición siríaca de la visita de San Judas Tadeo al rey Abgar, rey de Edesa, a causa de la correspondencia mantenida por este con Jesús, fue el intento de trasladar la conversión de esta ciudad bajo Ab gar IX (179-216), al reinado de Abgar IV Ukhama (13-50).

Moisés de Corena tomó esta tradición en el transcurso de sus viajes (especialmente por Edesa) y convirtió a Abgar en rey de Armenia (confusión comprensible debido a la fragmentación del territorio armenio entre las naciones vecinas en el transcurso de los dos primeros siglos de nuestra era). Si se compara su versión con la tomada por Eusebio de Cesárea, de los archivos de Edesa, se verá que ambas son exactamente iguales, con excepción de pequeñísimos detalles y la locación geográfica.

Pero lamentablemente, según Charles Pfeiffer "los peritos no encuentrna base histórica para dicha leyenda", aunque debía estar bastante difundida como para ser conocida por San Jerónimo, San Efren y por la peregrina Eteria, que afirman que Tadeo estuvo en Edesa. Entonces ¿estas tradiciones son totalmente falsas?. No, de ninguna manera. Como toda tradición tienen un fondo de realidad, pues Moisés de Corena nos da una de las explicaciones del origen de un cristianismo temprano en Armenia, que es la entrada de la fe de Cristo por esta zona, por Edesa.

La explicación de un fundamento apostólico en las iglesias antiguas es muy común pues, según Justo González "hacia fines del siglo II comienza a aparecer un fenómeno que dificulta sobremanera todo intento de descubrir el paradero de los apóstoles. Este fenómeno consiste en que todas las principales iglesias trataban de reclamar para sí un orígen directamente apostólico". Por eso vemos que Roma reclama a San Pedro, España a Santiago, Alejandría a San Marcos, India a Santo Tomás, Acaya a San Andrés, Creta a San Tito, Bitinia a San Lucas, Armenia a San Bartolomé y a San Judas Tadeo (sin excluír las predicaciones evangélicas de San Pedro, Santo Tomás, San Simón El Caananita, San Juan y San Matías).

Aunque estas tradiciones de orígen apostólico sean puestas en duda, no es posible hacer lo mismo con el hecho de una temprana evangelización en Armenia.

San Agustín y San Tertuliano leyeron en el Libro de los Hechos de los Apóstoles 2:9 "Partos, Medos, Elamitas y los que habitamos en Mesopotamia, Armenia, en Capadocia, en el Ponto y en Asia...", versión que sería la más lógica desde el punto de vista geográfica, pues entre Mesopotamia y Capadocia está Armenia y no Judea (como dicen las versiones conocidas). Lamentablemente no he podido hallar en ningún manuscrito semejante variante (entre los 392 manuscritos consultados, que van del siglo II al XVI, en once idiomas distintos incluídos los armenios).

Mas hay otras evidencias mucho más facilmente comprobables como la carta enviada por Dionisio, Obispo de Alejandría, a Meruzanes, Obispo de Armenia, aconsejándole que fuese más tolerante con los cristianos que habían apostatado de su fe en medio de la persecusión. Esta carta, escrita en el año 250, nos muestra:

1. Una iglesia suficientemente grande como para tener un obispo.
2. Una iglesia suficientemente importante como para relacionarse con otros obispados.
3. Una iglesia suficientemente pujante como para ser perseguida.
4. Una iglesia suficientemente dispersa como para tener diversidad de criterios.

El arzobispo Ormanian, y el Vartabed (cargo docente en temas teológicos) Mesrob, dan en sus libros la sucesión de los obispos, comenzando con Judas Tadeo (aunque discrepan en los nombres de los primeros hasta Gregorio El Iluminador).

Los misioneros de la fe cristiana, antes del siglo II ya habían evangelizado en Osroena (Edesa) y en Armenia.

También es posible que hubiese en Armenia grupos heterodoxos de influencia gnóstica (marcionitas, bardesanitas y maniqueos), a causa de la influencia de estas herejías en Edesa a mediados del siglo II.

Las regiones de entrada del cristianismo en Armenia fueron dos: por el Este (Ponto y Capadocia) y por el Sudeste (Osroena) a causa de las persecusiones generales en otras regiones vecinas, que se refugiaron en Armenia.

Tampoco es posible olvidar que mientras San Gregorio estuvo en el Jor Virab, fue alimentado por una viuda cristiana.

Pero la prueba más contundente es la cantidad de mártires armenios reconocidos por otras Iglesias, además de los reconocidos por la Iglesia Apostólica Armenia.

Los cuarenta mártires de Sebasté (circa 295), los testigos de Ararat (Acacio y 10.000 soldados - circa 115), Polieucto (¿?), algunos en tiempos de Decio y de Diocleciano (250-300), 36 vírgenes con Hripsimé (299), 5 Vosquian (circa 100), 17 Suquiasián (circa 150), 1000 con Bartolomé (68), etc..

Sabemos de reyes que persiguieron a los cristianos en sus territorios, como Ardashés (en el 110), Josrov (en el 230), y Tirídates III (en el 287).

Por lo cual podemos afirmar con Peruyo y Angulo "lo cierto es que antes del siglo IV ya había muchos cristianos en Armenia...".

En conclusión se puede afirmar que, aunque no se pueda asegurar un fundamento apostólico de la Iglesia Armenia, ésta se estableció entre fines del siglo primero y mediados del segundo, creciendo y desarrollándose durante el tercero hasta que, al llegar al siglo cuarto, pudo ser declarado el cristianismo como la religión del Estado.

El pueblo armenio habia tomado una decisión firme por Cristo, y a través de la historia vemos que se mantuvo fiel, tanto en Avarair (451), como en las diferentes invasiones de árabes (640), seljúcidas (1048), mongoles (1236), otomanas (1514), como durante el Genocidio de 1915 (que no sólo fue obra de los turcos), y en la actual diáspora en las diferentes ramas de la fe cristiana (Gregorianos católicos, evangélicos y protestantes).

**DANIEL ANTOYAN**

# Vazken Iº envió telegramas a Norteamérica

A raíz del trágico sismo que acaba de asolar la ciudad de San Francisco, en el Estado de California, S. S. Vazkén Iº, en nombre de la Iglesia Apostólica Armenia, envió sendos telegramas al Presidente de los Estados Unidos de Norteamérica, Sr. George Bush, al gobernador del Estado de California, Sr. George Deukmekdjian, y al Primado de la Iglesia Apostólica Armenia del Oeste de los Estados Unidos, S. E. Monseñor Vatché Hovsepian, expresando su dolor por el trágico suceso acaecido.



# Ճշմարտութիւնները Ծուռ Հայելիի Մէջ Տեսնելու Հոգեբանութիւնը

Բոլոր անոնք որոնք կարդացին Արմենիա» օրաթերթին, Ուրբաթ, 0 Հոկտեմբեր թիւին մէջ լոյս տեսած յօդուածը, «Մեր Հայրենիք» որագրով՝ նիւթէն պահ մը շահարգռուած, հարց տուին թէ ի՞նչ որ գիտի մասին է ակնարկութիւը։ Սակայն՝ նկատելով արտայայտած տափակ ու ծիծաղելի գաղաարները, եւ անպատկառ... ոճը րութեան՝ համոզուեցան թէ վերջականնապէս կը գտնուին անբուժելի... անյոյս պարագայի մը դէմ անդիման։

Գրութիւնը մասամբ – այո, ո՛չ ամբողջովին եւ թիւր ըմբռնումներու առընթեր – կը վերաբերի «Իտալացի Աղջկան Երգ»ին (Թարգմանութիւն՝ Միքայէլ Նալբանդեանի), կամ՝, ընդհանրապէս ճանչցուած, «Մեր ՚այրենիք Թշուառ Անտէր»ին, եւ ՚չ թէ 1920 Նոյեմբեր 29-ով ի ըսյառ ոչնչացումէ փրկուած ու վերաուած մեր Հայրենիքին, ինչպէս որ խորագիրը կ՚ենթադրէր, եւ ինչպէս ՚ր, աւա՜ղ, բոլոր ընթերցողներն ալ ՚ը սպասէին։

Զ՚արժեր երկար ծանրանալ սոյն րութեան վրայ, որ ի մէջ այլ սըալներու կը յարձակի «վատոգի րամադրութեամբ» «Սարտարապատ»ի Հոկտեմբեր 18 թիւին, «Տաարան Համոյթին Տգեղ Անակնկալը» յօդուածին դէմ։

Հեղինակները վերոնշեալ «Մեր ՚այրենիք» գրութեան կը բարբանջեն րենց գիտցած-չգիտցած նիւթերուն ՚ասին, ու գլխիկոր հըջելով դերերը իրենք զիրենք կը տեսնեն ճշմարիտ, անկեղծ ու տիպար հայրենասէրներու առաջապահ գիծերուն վրայ... «փիւրեղ զգացումներու», «ազնիւ պայքար»ի եւ հերոսութեան փետուներով զարդարուած։

Աստուած իմ ինչ բանաքաղ եւ ինչ բարդ ածանց բառեր կը գործածեն եւ առանց նոր բան մը ըսելու... որպէսզի ցոյց տան որ «Մեր Հայրենիք»ը ... «հայրենի զանգուած»ը եւ «Հայրենի Տաղարան Համոյթ»ն են որբեւ թէ իրենց գլխաւոր մտահոութիւնը։ Թիւրիմացութիւ՞ն, եւ ամ դարձի՞ եկած են մեր բարեամները։

Ո՛չ մին, ո՛չ միւսը, այլ՝ պարզաէս ճշմարտութիւնները ծուռ հայեիի մէջ տեսնելու հոգեբանութիւն, ամ «հոգեկան բարդոյթ»։

Աւելի՛ն, գրութեան նպատակը ո՛չ եր Հայրենիքը, ո՛չ «հայրենի զանուած»ը, եւ ոչ ալ «հայրենի Տաղաան համոյթին յարգելի արուեստաէնները –որոնց բարեմտութիւնը այսան «սորրին» կերպով չարաչահել ուզեն այսօր– ջատագովել ու ալշտպանել է. Այլ միայն «մելանոած թուղթերու անկիւններ»էն ան քարոզչութիւն կատարել ի հեւկս ճշմարտութեան, «մեր Հայրեքին», «հայրենի զանգուածին» եւ այրենի Տաղարան համոյթին յարգի արուեստագէտներ»ուն։

«Մեր Հայրենիք» գրութիւնը ստագրողը տխուր բաներ է միայն ստուածագար խմբակի մը, որ ստած է գաղութս պահել այսօր ի իր տխուր վիճակին մէջ, եւ ան տարօրինակ հայրենասիրութի-, եւ բացխփիկ միութեան ոգին, տարբեր բան չեն, եթէ ո՛չ հատուածական բռնատիրութեան պոռոտախօս մարմաջը։

Ողբերգա-զաւեշտական մասը գրութեան, անոր վերջին ու վերջընթեր համարներն են, անկասկած։ «Բայց բաւական է այսքան խայտառակութիւն։ Մեր Հայրենիքը, ոչ թէ թշուառ, անտէր... կը սպասենք որ Տաղարանը զո՛հ չերթայ մեղկութեան ու թաքուն սպառնալիքներուն»

Այս երկու համարները ոչ միայն կը հակասեն գրութեան ոգիին, այլ՝ մանաւանդ «Արմենիա»յի ցարդ հըրատարակած համապատասխան գրութիւններուն։

Կը շնորհաւորենք մեր բարեկամները որ վերջապէս կ՚ընդունին ու կը խոստովանին թէ «Մեր Հայրենիք»ը «թշուառ» եւ «անտէր» չէ, մանաւանդ երբ ակնբախ է այս իրողութիւնը։

Կը խոստովանին վերջապէս թէ նոյն հայրենի ժողովուրդը – որ տասնամեակներ շարունակ «զգուելի ու սորրին» կերպով որակեցին իբրեւ համայնավարութեան մեղկ ու հլու ծառաներ եւ այլ ստորոգելիներով – ոչինչ ունի իրենցմէ սորվելիք. մանաւանդ երբ կը տեսնեն թէ պայքարի եւ վճռականութեան ինչ ուժով է որ կը դրսեւորէ իր հողին, Հայրենիքին, ինք տէր ըլլալու հզօր գիտակցութիւնը։

Ինչ կը վերաբերի «մեղկութեան ու թաքուն սպառնալիքներու»ն ծիծաղելի կը գտնենք զանոնք արտասանուած ումնի մը բերնէն, որուն տղայական արարքը – «Տաղարանի, Արժանթինի Զարդարուեստի Թանգարանին մէջ կատարուած ելոյթի նախօրեակին ցոյց տուաւ արդէն ինչ բարի պտուղ ըլլալը։

Մեր Քալ Նազարը խիզախութեամբ փրփրեբերան կը սպառնայ պահանջելով «Տաղարան»ի ղեկավարէն որ յաջորդ օրուան համերգին անպայման «Իտալացի աղջկան երգը» խմբերգուի։

Անշուշտ հայրենի երգահան խմբավար Երուանդ Երկանեան, որուն բարեմտութիւնը չափ ու սահման ունի, ձանձրացած կոբիճին պնդումներէն, եւ որպէսզի անգամ մը եւս զոհ չերթայ չարաչահումի իր տեղը կը նստեցնէ զայն, ձգելով զինք առանձին ... իր զառանցանքին հետ։ Ինչ «խեղկատարութիւն», եւ ինչ «խեղկատարութիւն»ներ որոնց պիտի անդրադառնանք պատշաճ ատենին։

Եթէ այս աստիճան անուղղայօրէն կարծրացած են մեր բարեկամներուն հայրենասիրական թիւր ըմբռնումները, եւ բոլոր նուիրական ճշմարտութիւնները ծուռ հայելիի մէջ տեսնելու հոգեբանութիւնը, որ նոյնիսկ չեն կրնար ձերբազատուիլ Հայաստանի մէջ տեղի ունեցածները կամայականօրէն մեկնաբանելու ախտէն՝ ըսել է թէ ոչ միայն գաղութս, այլ ամբողջ սփիւռքը տակաւին քաշելիքներ ունի։

Այո «բաւական է այսքան խայտառակութիւն»։

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ»

# Աէրոֆլօթի Գրասենեակի Գրաւում, Հերոսութիւ՞ն Թէ՝ Ողբերգութիւն

24 Հոկտեմբերի Գլարին օրաթերթին մէջ կարդացինք քանի մը հայ երիտասարդներու կողմէ Աէրոֆլօթ Սովետական օդային սպասարկութեան գրասենեակին դէմ կատարուած գրաւման լուրը, որ մնացած է խորհրդանշականութեան (սէմպոլիք) սահմանին մէջ, տեւած է մօտ երկու ժամ, ապա, խաղաղ ցոյցով կատարուած այս գրաւման գործողութեան վայրէն հեռացած են երիտասարդները։

Կ՚անգիտանանք թէ ոստիկանական միջամտութիւն եղա՞ծ է թէ ոչ, կամ գոնէ կատարուածին հաշիւ տալու համար երիտասարդները ոստիկանատուն առաջնորդուա՞ծ են։ Քանի որ պատահարը խիստ բռնութեան ցոյց մը չէ, անհաւանական չէ որ անոնք անմիջապէս անպարտ արձակուած ըլլան, ինչ որ տրամաբանական է։ Մնաց որ եղած ցոյցը յայտնի նպատակի մը հետեւանք է եւ սփիւռքահայութիւնը եւս շահագրգռող լուրջ հարց է Հայրենիքին պարզած ներկայ իրավիճակը եւ մենք ուրիշ միջոց չունինք բայց եթէ ոչ մեր ձայնը եւս ըսելի դարձնել մեր ապրած երկիրներու հանրային կարծիքին, ինչպէս նաեւ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդին։

Երիտասարդները կը պատկանին Հ. Յ. Դաշնակցութեան։ Եթէ նոյնիսկ գաղտնի պահուէր, –ինչ որ կարելի չէ– պիտի չտարակուսէինք այս եզրակացութեան հասնիլ քանի որ նմանօրինակ արարքներու հեղինակները մեր քոյր կուսակցութեան թաքթիքին մաս կը կազմեն եւ իրենց համար միջոցին մէջ խտրութիւն չկայ եւ պատրաստ են օգտակար թէ անօգուտ որեւէ գործունէութիւնն ունենալու, ինքնիշխան եւ յանձնապաստան, առանց նկատի ունենալու թէ ինք միակը եւ բացարձակ հեղինակութիւնը չէ սփիւռքի մէջ։ Դեռ տրուած խոստումները, գրուած ստենագրութիւնները թարմ են, որոնց համաձայն սփիւռքի մէջ երեք հայկական կուսակցութիւններ միակամ եւ համաձայն գործելու են արցախեան հարցի լուծման մէջ, որ կ՚ենթադրէ որեւէ գործնական քայլ վերատեսութեան եւ վաւերացման ենթարկել գործադրութեան դրուելէ առաջ։

Աէրոֆլօթի գրասենեակի գրաւման յաջորդ օրը գրոյցներ հրջան ըրին թէ կուսակցութեան գիտակից խաւը դատապարտած է սոյն արարքը, ըսելով թէ հեղինակները անպատասխանատու երիտասարդներ են, որմէ կ՚ենթադրուի թէ կուսակցութիւնը ամբողջական կազմով չի բաժներ այս տխուր եւ անտեղի միջադէպը։

Սա, որքան որ գոհացուցիչ է որպէս լուսաբանութիւն, բայց եւ այնպէս մեզի իրաւունք կուտայ կասկածելու թէ՝ Ա.– Նկատի ունենալով թէ երեք կուսակցութիւններ համախոհ գործելու են որոշում մը առնելէ առաջ, Հ.Յ.Դ.ի Պ. Այրէսի ղեկավար հրջանակները անպաշտօն կերպով նեցուկ կեցած են երիտասարդներուն, –ինչ որ դրամաբանական է– բայց, դիմած են օր մը վերջ, իրենց ձեռքերը լուալու՝ կանխապատրաստուած ռազմավարութեամբ, որպէսզի դիւրիմացութիւններ չպատահին։ Բ.– Եթէ երիտասարդները գործած են, ըստ կամս, առանց վերէն եկած հրահանգի մը, –ինչ որ անտրամաբանական է– ուրեմն, ղեկավար մարմինը որեւէ հեղինակութիւն չի ներկայացներ անոնց վրայ։ Վտանգաւոր կացութիւն մը, եթէ իրօք այդպէս է։

Իրադարձութիւններու այս փափուկ կացութեան մէջ (գործենք քաղաքական հասունութեամբ) եւ փնտռենք դիւանագիտական բոլոր միջոցները, մինչեւ իսկ կամուրջ նետելու ձգտինք Սփիւռք-Հայրենիք քաղաքական յարաբերութիւններ ստեղծելու, –եթէ հնարաւոր է– ինչպէս նաեւ սփիւռքի ներկայացուցիչներ ուղղարկուին Քրէմլին, ոչ իբրեւ օտարերկրեայ քաղաքացիներ, հապա՝ Հայրենիքի ապագայով մտահոգուած հայեր, ուր օտար երկիրներու միջամտութենէն չ՚ակնկալուին այդ յարաբերութիւնները, որովհետեւ ինչ որ կը պատահի Խ. Միութեան սահմաններուն մէջ, ներքին հարցեր են եւ ոչ ոք չի կրնար միջամտել, –մինչեւ իսկ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը– բայց այո՛, հայ իրականութիւնը եւ բովանդակ հայ ժողովուրդը, սփիւռքը ներառեալ։

Կը կարծենք, –եւ այդպէս ըլլալու ենք– հայրենի ժողովուրդը չունի այն «քաղաքական հասունութիւնը», ինչ որ կարող ենք մենք ունենալ, տաքն ու պաղը տեսած եւ զանազան ազգերու եւ երկիրներու որդեգրած քաղաքական ուղղութիւններու մէջ թրծուած ըլլալով։ Մեր միակ տեղն ու բացարձակ ապաւէնը Խ. Միութեան մեծ ընտանիքն է, ուրկէ դուրս իյնալը, այսօր, ուղղակի կործանում է։ Մենք բարեկամներ չունինք։ Եթէ ունինք –միշտ այդպէս կարծած ենք– մեզմէ շատ հեռու են։ Մենք իրա՛ւ բարեկամի մը կարօտ ենք, մեր անմիջական յարեւանն ու դրացին որուն զօթելու ենք մեր քաղաքական եւ տնտեսական ճակատագիրը, երբ ոչ բնական հարստութիւն, ոչ ծով ունինք եւ ոչ ալ բազմութիւն ենք։ Սա մեր փոքրութեան եղած ակնարկ մըն է, որպէս համտանք եւ ծաւալ եւ ոչ՝ բարոյականի եւ իմացականի։ Փոքր են եւ փոքր մնալու դատապարտուած են ա՛յն ժողովուրդները, որոնք կենսականը չտեսնելու սխալանքին մէջ կ՚իյնան, կը հետապնդեն մանր, միջուկէն արդէն իսկ պարպուած հարցեր եւ կը մնան անոնց նեղ հրջագիծին մէջ, երբ կան եւ գոյութիւն ունին ուրիշ կերպ ընդարձակուելու հնարաւորութիւններ, որոնք ուշ կամ կանուխ այդ փոքր հարցերը հասկնալի եզրակացութեան մը պիտի յանգեցնեն։ Այս անհեռատես գործելակերպով, փակուեցան կարգ մը դռներ, որոնք բաց էին մեր դիմաց։ Սա նմանեցաւ օսմանեան դրամատան գրաւումին, որմէ տասը հերոս (°) փրկուեցաւ, որպէսզի խասգիւղի մէջ տասը հազար անմեղներ ջարդուին։

Միացեալ ճակատ, միացեալ հաւատք, միացեալ դաւանանք դէպի ողջմտութիւն եւ քաղաքական հասունութիւն։

Պայմանները կը ներեն որ առաւելագոյնս օգտուինք անոնցմէ, բայց դրական ճանապարհ որդեգրելով։

Վ. Ա.

# Ոչ Եւս Է Ընկեր Արամ Տօնիկեան

Հինգշաբթի 26 Հոկտեմբերի առաւօտեան մահկանացուն կնքեց վեթերան ու ղեկավար Ընկեր Արամ Տօնիկեան։

Ընկ. Տօնիկեան ծնած էր Արեւմտեան Հայաստանի Եօզկաթ գաւառին մէջ, աւելի 77 տարիներ առաջ։ Ան հազիւ 8 տարեկան էր երբ իր ծնողքին հետ, մեծ եղեռնէն ճողոպրած կ'ողղուի Սելանիք-Յունաստան, ուր կը ստանայ իր երկրորդական ուսումը տեղւոյն American Collegeին մէջ։ Արժանթին կը հաստատուի տակաւին շատ երիտասարդ տարիքին մէջ, ուր իրեն հետ կը բերէ իր անցկուն կամքը լաւատեսութիւնը, եւ յոյսերը, իբրեւ ամբողջ հարստութիւն։

Անժելին հետ իր ամուսնութենէն սերած են երկու զաւակներ Ռուբէն եւ Էտկարտօ, որոնց կը յաջողի ջամբել հայեցի կրթութիւն ու դաստիարակութիւն, ինչպէս նաեւ Քրիստոնէական հաստատ սկզբունքներ։

Երիտասարդ հասակին ան կը մասնակցի գաղութիս ազգային կեանքին. Յաջորդաբար կ'անդամակցի մեծ վարպետ Լեւոն Վարդապետեանի գլխաւորած Կոմիտաս Երգչախումբին, կը հիմնէ Պուէնոս Այրէսի Հ.Բ.Ը.Մ.ի Երիտասարդաց Լիկան, որուն 50-ամեակը պիտի տօնուի այս տարի. Վարչական կ'ըլլայ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի եւ Փոխ-Ատենապետի պաշտօնը կը վարէ։

Իր հայրենասիրական ու քաղաքական առողջ հակումները զինք կ'առաջնորդեն անդամագրուելու Ռամկավար Ազատական Կուսակցութեան ու Թէքէեան Մշակութային Միութեան շարքերուն մէջ, կը հիմնէ ՌԱԿի Պայքար Ակումբը Պուէնոս Այրէսի մէջ, վարելով անոր ատենապետութիւնը մինչեւ իր մահը։

1969-ին ՌԱԿի Ընդ. Պատգամաւորական Ժողովին, Պէյրութի մէջ կը ներկայացնէ Հարաւ Ամերիկայի Շրջ. Վարչութիւնը։

Հիմնադիրներէն էր նաեւ Պաշտօնաթերթ «Սարտարապատ»ին որուն գործունէութեան կը հետեւէր շատ մօտէն։

ՌԱԿ-ը կը ներկայացնէր Հայ Միջ-Միութենական Խորհուրդին (AIA) մօտ։

Ան նաեւ բարերար էր, բարեսիրութիւնը քաջալերելու եւ բարերարներ գտնելու իմաստով։

Հսկումը կատարուեցաւ Պուէնոս Այրէսի Forest 906 շրջանին մէջ Հինգշաբթի 26 Հոկտեմբերին իսկ թաղումը կատարուեցաւ Վիժէկասի Հայկական Գերեզմանատան մէջ ներկայութեամբ հարազատներու եւ բարեկամներու, ՌԱԿը, Թ.Մ.Մ.ը կը ներկայացնէին Ընկերներ՝ Նահապետ Նահապետեան, Միհրան Սարաֆեան եւ Նորայր Գարատանեան։

ՌԱԿի Հարաւ Ամերիկայի Շրջ. Վարչութեան անունով դամբանական արտասանեց «Սարտարապատ»ի խմբագիր Ընկ. Նորայր Գարատանեան հայերէնով, եւ ապա քասթիլերէնով Ընկ. Միհրան Սարաֆեան։



Ընկեր Արամ Տօնիկեան հիմնարկէքի սիմը կը շաղախէ Թ.Մ.Մ.ի Սուրէն ու Վըրճինիա Ֆէստճեան Կեդրոնին։

## Ընկեր Նորայր Գարատանեանի ՌԱԿ-ի Եւ Թ.Մ.Մ.-ի Հարաւ Ամերիկայի Շրջանային Վարչութեան Անունով Արտասանած Դամբանականը

Ընկ. Արամ Տօնիկեան ոչ եւս է. Այսօր, երբ ցուրտ հողին կը յանձնենք մեր վեթերան ընկերոջ անկենդան մարմինը, իւրաքանչիւրս հարց կուտայ ինքզինքին, թէ ի՞նչ է կորուստը եւ ովքե՞ր են կորսնցնողները։

Անկասկած Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Թէքէեան Մշակութային Միութեան ու պաշտօնաթերթ «Սարտարապատ»ի, մեծ ընտանիքները կը կորսնցնեն, աւա՜ղ, հիմնադիր ղեկավար մը, ու երկա՜ր ճանապարհի հաւատարիմ ընկեր մը։ Իսկ Բարեգործական Համազգային հզօրագոյն կազմակերպութիւնը կը կորսնցնէ հաւատաւոր ու վաստակաւոր պատասխանատու մը, նաեւ հիմնադիրը անոր Երիտասարդաց Լիկային (Պուէնոս Այրէսի մէջ)

Նաեւ Հայց. Առաքելական Եկեղեցին Կոմիտաս Երգչախումբը եւ Հայ Միջ Միութենական խորհուրդը ուր կը ներկայացնէր ՌԱԿը, ամբողջ գաղութը, կը ազգան աւանդական կարեւոր դէմքի մը մեկնումը։

Բոլոր այս կազմակերպութիւններուն ու հաստատութիւններուն Ընկ. Տօնիկեան ծառայած էր ու կը ծառայէր խոր հաւատքով, պարկեշտութեամբ ու պարտաճանաչութեամբ, եւ յաջողած էր սիրվիլ ու յարգուիլ։

Եթէ մահով մարդ արարածը կը կորսուի, կ'անհետանայ, եւ մոռացութեան կը դատապարտուի, ապա՝ կը հաստատենք թէ՝ Ընկ. Տօնիկեան ո՛չ անհետացաւ, ո՛չ ալ պիտի մոռցուի։ Ան պիտի շարունակէ ապրիլ մեր սրտերուն մէջ, իր ձգած հոյակապ յիշատակներով ու բարի գործերով։ Այժմէն իսկ իր անունը անջնջելի կերպով, եւ ոսկի տառերով գրուած է գաղութիս պատմութեան պատուաբեր մատեանին մէջ։ Վստահ ենք թէ Հ.Բ.Ը.Մ.ի Երիտասարդաց Լիկան իր 50-Ամեակին՝ արժանաւորապէս պիտի մեծարէ հանգուցեալին յիշատակը։

Ընկ. Տօնիկեան նաեւ բարերար մըն էր բառին իսկական իմաստով. Ան կը քաջալերէր բարիքն ու բարեսիրութիւնը յօգուտ հայ դպրոցին ու Բարեգործականին. կը ծրագրէր նաեւ «Սարտարապատ» պաշտօնաթերթիս օգտակար հանդիսանալ, մեծ նուիրատուութիւն մը ձեռք բերել, երբ անողոք մահը եկաւ ու զինք խլեց մեզմէ, կիսատ թողլով իր թանկագին երազը։

Հաւատարիմ ՌԱԿի գաղափարականին անհուն սիրով կը սիրէր Մայր Հայրենիքը, որ եռիցս այցելած էր -անգամ մը պաշտօնական հրաւէրով- ուրկէ կը վերադառնար ամէն անգամ աւելի երիտասարդ, առաւել կորովով ու խանդավառութեամբ։

Ան կը հրճուէր ու կ'ուրախանար Հայրենիքի ուրախութիւններով ու նուաճումներով, եւ կը տխրէր ու կը ցաւէր Հայրենիքի ցաւերով։ Ան շատ մտահոգ էր 1988էն ի վեր պատահած հայրենի դժբախտութիւններով։

Իր տիկնոջ Անժելին հետ ամուսնական բոյնէն սերած երկու զաւակներուն՝ Ռուբէնին եւ Էտկարտոյին կրցած էր փոխանցել իր սէրը եւ հաւատարմութիւնը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, Բարեգործականին, Հայրենիքին ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։ Ահա թէ ինչո՞ւ իր պարտականութիւնը խղճմտօրէն կատարած ըլլալու գիտակցութեամբ, ան մեզմէ կը բաժնուի խաղաղ, ապահով, սիրուած ու յարգուած։ Սիրելի Ընկեր հողը վրադ թեթեւ, խունկ ու աղօթք ազնիւ հոգիիդ։

Դաւիթ Յովհաննէս, հայրենի ծանօթ ու սիրուած հայ ժամանակակից բանաստեղծ, որ այժմ կը գտնուի մայրաքաղաքս՝ Պուէնոս Այրէս, մասնաւորապէս ժամանեց մասնակցելու համար Մշակոյթի ամսուան առիթով՝ Արժանթինահայ Մշակ. Միութեան սարքած դասախօսական երեկոյթին, 30 Հոկտեմբեր 1989։

Ստորեւ կու տանք իր բանաստեղծական գործերէն՝ «*Ես Չեմ Մեռնի*»ն, յապաւումով։

## *Ես Չեմ Մեռնի*

*Ես չեմ մեռնի անհիշատակ,*
*ես չեմ բախի դուռն օտարի,*
*որովհետեւ մի սուրբ կրակ*
*վառում է ինձ հազար տարի։*

*Հազար շիրիմ կա իմ հոգում,*
*հազար մեռել ու նահատակ,*
*որոնք հազար ձայնով ոգում,*
*բորբոքում են արյունս տա՛ք։*

*Ելի՛ր, ասում են ինձ նրանք,*
*ելի՛ր, քո սուրբ վրեժը առ,*
*դեռ հոսում են անարձագանք*
*մեր արյունի գետերը վառ։*

*Ելի՛ր, քո սուրբ վրեժը առ,*
*մեզ մի թողնիր անգերեզման...*
*– Եվ ձայները այդ հոգեառ*
*հալածում են ինձ ամեն ժամ։*

*Եվ Աստծուց ուզում եմ ուժ,*
*ուզում եմ կամք, ոգում եմ սուր,–*
*ա՜յն Աստծուց, որ այնքան ուշ,*
*այնքան քիչ է հային լսում...*

*Բայց ձայները նորից ոգում,*
*ինձ կանչում են՝ որդի՛, որդի՛,*
*էլ մի՛ խնդրիր ոչինչ ոգուց,*
*հարեւանից ու անցորդից։*

*Հարեւանը մեզ հյուր եկավ*
*եւ մեր տանը նստած է դեռ,*
*անցորդ մարդը խոսեց երկար,*
*բայց մեր ցավին միշտ անտարբեր։*

*Աղոթք արինք Աստծուն հեզ,*
*Աստված չեղավ մեզ օգնական...*
*– Քո՛ մեջ պիտի ուժը գտնես,*
*եւ այդ է քո միա՛կ ճամփան։*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ցաւով կիմանանք մեր ղեկավար եւ հիմնադիր ընկերներէն՝ Արամ Տօնիկեանի մահուան գոյժը։

Այս տխուր առիթով մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք մեր նուիրեալ ու հաւատարիմ ընկերոջ Տիկնոջ՝ Անժէլին եւ զաւակներուն՝ Ռուբէնի եւ Էտկարտոյի։

Ռ.Ա.Կ.ի Պուէնոս Այրէսի Պայքար Ակումբի Վարչութիւն

# Ընկեր Անդրանիկ Փոլատեան Մեր Մէջ

Անցնող շաբաթ Պուէնոս Այրէսի հայ գաղութը խանդավառ ու ոգեղինացած օրեր անցուց Պրն. Անդրանիկ Փոլատեանի շնորհիւ, որը կարճ ժամանակով այցելութեան եկած էր հոս:

Պրն. Ա. Փոլատեան 35 տարիներէ ի վեր ազգային յախուռն կեանքով կ'ապրի: Ան գրող է եւ հրապարակագիր, խմբագիր, հրապարակախօս եւ հասարակական գործիչ: Անսահման է իր եռանդը. այսօր ան Հ.Բ.Ը.Մ. «Յուշարար-Միութիւն» պաշտօնական ամսագիրին պատասխանատու խմբագիրն է եւ միեւնոյն ատեն Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետը: Իսկ անցեալին խմբագրած է թերթեր, կազմակերպած եւ վարած է յոբելինական հանդէսներ: Բեղուն եղած է Պրն. Ա. Փոլատեանի գրիչը. բացի հրապարակախօսական յօդուածներէ, ան հեղինակած է Հայ Արաբկիրի պատմութիւնը՝ շուրջ 1.100 էջ ծաւալով:

Պրն. Ա. Փոլատեան Պուէնոս Այրէսին, յատկապէս իր մարաշցի հայրենակիցներուն մատուցեց գեղեցիկ անակնկալ մը. վերջերս վերահրատարակուած «Մարաշ» գիրքը ամբողջացուցած է անոր նիւթը հասցնելով մինչեւ մեր օրերը:

Եւ այսպէս, վեց տասնեակ տարիներու իմաստալից ու բազմաբովանդակ կեանքով ապրած հայ մտաւորական մըն էր գաղութիս հիւրը: Ան իր անդրանիկ ելոյթը ունեցաւ իր Մարաշցի հայրենակիցներուն առջեւ՝ համառօտ կերպով ներկայացնելով Մարաշի Հայրենակցական Միութեան դերը այսօր որպէս բաբախող սիրտ, գործօն մարմին Սփիւռքի մէջ ունեցած մէկ տասնեակէ աւելի մասնաճիւղերով: Արդեօք ի՞նչ ապագայ կը գուշակէին մարաշցիին բարբարոս թուրքն ու յուդայաբար մեզ լքած Ֆրանսան, որ 1920-ին յանցագործի մը պէս փախաւ Մարաշէն՝ իրենց սմբակներուն թաղիք կա[...]ելով որ հայ ազգաբնակչութիւնը հետեւի իրենց եւ թուրքի հայատեաց մոլուցքին զոհ դառնայ... Եւ այս բոլորը Ֆրանսան ըրաւ ի հաշիւ հայ ժողովուրդի՝ երկիրներու տիրանալու համար:

Բայց մարաշցին տոկաց, ապրեցաւ ու պիտի ապրի... Անոր մէկ վկայութիւնը չէ՞ նաեւ այս հաւաքոյթը:

Ծանեկան էր Պրն. Ա. Փոլատեանի հանդիպումը Հ.Բ.Ը.Մ. Երիտասարդաց [...] – Հ.Ե.Ը.-ի անդամներուն հետ: Ցետ միջազգային եւ մեր Հայրենիքին մէջ այսօր տիրող տագնապալի կացութեան համառօտ վերլուծութեան, Պրն. Ա. Փոլատեան պատասխանեց երիտասարդներու հարցերուն՝ յորդորելով հաւատարիմ մնալ իրենց գաղափարներուն, հետաքրքրուիլ Մայր Հայրենիքով, տառապիլ անոր հետ, սակայն հեռու մնալ անօգուտ չափազանցութիւններէ:

Պրն. Ա. Փոլատեանի հրապարակային դասախօսութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 24-ին Մարի Մանուկեան Վարժարանին սրահին մէջ: Դասախօսութեան նիւթն էր Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Ինչպէս յայտնի է, այս օրերուն կիպրահայութիւնը մեծ խանդավառութեամբ ներկայ եղաւ Հաստատութեան նորակառոյց համալիրի բացումին: Կը նշանակէ՝ Մելգոնեանը երիտասարդացաւ, նոր աւիւնով լեցուեցաւ շարունակելու իր առաքելութիւնը: Համալիրին բացումը կատարեց Ազգային Մեծ Բարերար Ալեք Մանուկեան՝ ընկերակցութեամբ իր արժանաւոր դստեր՝ Հ.Բ.Ը.Մ. օրուայ ատենապետ Տիկ. Լուիզ Մանուկեան-Սիմոնի:

Պատշաճ էր ընտրուած պահը եւ Պրն. Ա. Փոլատեան դեռեւս հանրութեան անծանօթ գեղեցիկ մանրամասնութիւններով ներկայացուց Մելգոնեան Հաստատութեան հիմնադրումին պատմութիւնը, ապա եւ՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատմութիւնը: Քաջատեղեակ լինելով հայ կրթական օճախներու պատմութեան՝ անոնց ընդհանուր նկարագիրը տալէ ետք խօսուն փաստերով ցոյց տուաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան տեղն ու դերը մեր կրթօճախներու փաղանգին մէջ: Հաստատութեան շրջանաւարտ երախտաւորը ըլլալով՝ Պրն. Ա. Փոլատեան յականէ անուանէ նշեց Մելգոնեան Կրթական Հաստատութեան շնորհալի շրջանաւարտներուն կատարած ազգօգուտ աշխատանքը Հայրենիքին մէջ թէ Սփիւռքի տարածքին:

Կենդանի գիծերով ներկայացուեցան հայրենասէր հայորդիներ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրները, որոնք դէպքերու պատահականութեամբ ուսում ստանալէ զրկուած ըլլալով՝ դեռ կենդանւոյն իրենց ամբողջ հարստութիւնը տրամադրեցին Հ.Բ.Ը.Մ. եւ Կիպրոս կղզիին մէջ Լուսոյ Տաճար մը հիմնեցին ուսումնածարաւ հայ պարման-պարմանուհիներուն համար: Ի՞նչ իմաստուն հեռատեսութեամբ անոնք իրենց գումարը վստահեցին Հ.Բ.Ը. Միութեան, որը «Աւետարան»-ի բարի սերմնացանին պէս արժէւորեց այդ գումարը մէկի դիմաց՝ յիսուն, մէկի դիմաց՝ հարիւր... Եւ ահա, 75 տարիներէ ի վեր անմար է Մելգոնեան Կրթական Հաստատութեան Լոյսի ջահը. դրամը Լոյս դարձաւ՝ իր բարի ծառայութիւնը մատուցանելով մեր կեանքէն ներս:






Պրն. Ա. Փոլատեան չմոռցաւ նաեւ երախտագիտական խօսք ըսելու այն հայորդիներու հասցէին, որոնք ճիշդ կողմնորոշեցին Մելգոնեան եղբայրները իրենց հարստութիւնը նման նպատակի մը համար յատկացնելու բարի խորհուրդով:

Ան արդար իրաւունքով շեշտեց որ Հ.Բ.Ը. Միութեան կատարած բոլոր բարի գործերուն վրայ գումարուեցաւ նաեւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան հանդէպ անոր հոգածութիւնը, հաստատութիւն մը, որ լուսաւոր շաւիղ մը ձգած է իր ետին: Եւ այսօր նոյն հոգածու ձեռքերով նորացած, թարմացած, երիտասարդացած, դարուս ընձեռած յարմարաւէտութեան բոլոր պայմաններով օժտուած՝ կեանքի նոր շրջան մը կը թեւակոխէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Ունկնդիրներով լեցուն սրահը լարուած ուշադրութեամբ հետեւեցաւ հետաքրքրական դասախօսութեան՝ ջերմ ծափահարութիւններով շնորհակալութիւնը յայտնելով:

Խունկ ու աղօթք Մելգոնեան ազգասէր եղբայրներու անմեռ յիշատակին: Բարի նոր երթ Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Հ.Բ.Ը. Միութեան բարեգործ ձեռքը թող ամէն տեղ հասնի:

**ԴՈԿՏՈՐ**
**ՍԱՄՈՒԷԼ ԱՆԹՈՍԵԱՆ**

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Ստորեւ կը հրատարակենք Հոգշ. Տ. Յարութիւն Ծ. Վարդապետ Մուշեանի շնորհակալութեան գիրը ուղղուած խմբագրութեանս մաղթելով իրեն բարօրութիւն ու քաջառողջութիւն:*

*Յարգելի Տիարք,*

*Աւելի քան չորս ամիսներ բժշկական դարմանման ենթարկուելէ, –որու երկու ամիսները բծախնդիր հսկողութեանը տակ Գլինիքաս հիւանդանոցի խղճամիտ ու հոգատար բժշկապետերու–, ու կրկին հարազատներուս գիրկը դառնալէ յետոյ, սրտի պարտականութիւն կը զգամ իմ երախտագիտութիւնս յայտնել ազգապարծան Մամուլին, որ գիտցաւ արձագանք հանդիսանալ առողջական վիճակիս:*

*Առիթը պատշաճ նկատելով, Ձեր թոյլտուութեամբ կ'ուզեմ շնորհակալութիւններս յայտնել նաեւ բոլոր անոնց՝ որոնք շատ մօտիկէն հետաքրքրուեցան առողջական վիճակովս ու աղօթարար եղան առ բարեգութն Աստուած, որպէսզի Իր հրաշագործ Աջը անպակաս ընէ վրայէս:*

*Թող Տէրը վարձահատոյց ըլլայ բոլորիդ եւ զերծ կացուցանէ պատահական բոլոր երեւելի եւ աներեւոյթ փորձանքներէ:*

*Աղօթարար*

Յարութիւն Ծ. Վրդ. Մուշեան

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ընկեր Արամ Ցօնիկեանի տխուր մահուան առթիւ «ՍԱՐՏԱՐԱՊԱՏ»ին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները:

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Վանիկ Հիւսեան | Ա. 3.000.- |
| Տէր եւ Տիկ. Նշան Տէօնտիկեան | Ա. 5.000.- |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Գէշիշեան | Ա. 5.000.- |
| Տէր եւ Տիկ. Միհրան Սարաֆեան | Ա. 30.000.- |
| Տէր եւ Տիկ. Տանիէլ Եուսէֆեան | Ա. 30.000.- |